ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

375010, Երևան, Վ. Սարգսյանի փ. թիվ 3 հեռ. 58-21-57

«23» 06 2006 թ.
N 4 3501

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՓԱՍՏԱԲԱՆ՝
ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
2006թ. հունիսի 6-ի
դիմումի

Պարոն Զոհրաբյան

Նշված դիմումով բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

«Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և հարկադիր կատարման մասին» Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ կետի հայերեն տեքստում «Կողմեր» բառը վերաբերում է արբիտրաժային համաձայնագրի կողմերին, քանի որ դա, նախ և առաջ, ակնհայտ է հոդվածի համատեքստից, և բացի այդ, Կոնվենցիայի պաշտոնական անգլերեն տեքստում դրա մասնակից (կողմ) պետությունները հիշատակվում են որպես "Contracting State" կամ "State Party to this Convention", մինչդեռ 2-րդ հոդվածի 3-րդ կետում օգտագործված է "party" բառը (փոքրատառով): Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ կետի հայերեն տեքստում «Կողմեր» բառի օգտագործումը մեծատառով, մեր կարծիքով վրիպակ է:

Կոնվենցիայում օգտագործվող «արբիտրաժ», «արբիտրաժային համաձայնագիր» տերմինները համարժեք են ՀՀ օրենսդրության մեջ օգտագործվող «միջնորդ դատարան» և «միջնորդ համաձայնություն» տերմիններին: Միջազգային-իրավական ակտերի և ազգային օրենսդրության միջև առկա այս եզրույթային անհամապատասխանությունը վերացնելու ուղղությամբ քայլեր են ձեռնարկվել, մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից միջնորդ դատարանների մասին օրենսդրության բարեփոխման նպատակով մշակվել է «Արբիտրաժի մասին» օրենքի նախագիծ, որը հիմնված է տվյալ ոլորտում լայնորեն ընդունված միջազգային եզրույթների և մոտեցումների օգտագործման վրա:

Ինչ վերաբերում է Կոնվենցիային ԱՄՆ մասնակցության հարցին, ապա հայտնում ենք, որ այդ երկիրը Կոնվենցիային միացել է 1970թ. սեպտեմբերի 30-ին, որի համար այն ուժի մեջ է մտել 1970թ. դեկտեմբերի 29-ից:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Հ. ԹՈՐՈՍՅԱՆ